ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐՈՆՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ԿԱՐԱՊԵՏԻ

ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա /կերպարվեստ/» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Անուշ Կարապետի Եղիազարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լեմս Սուրենի Ներսիսյան**

արվեստագիտության թեկնածու՝ **Լիլիթ Ռաֆայելի Մելիքյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա՝ 2025 թ. մարտի 27-ին՝ ժամը 12-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, ք. Երևան,Տիգրան Մեծ 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2025 թ-ի փետրվարի 19-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից կրթական համակարգն այսօր հանդես է գալիս որպես մարդու, ողջ հասարակության և պետության զարգացման գործընթացում առաջընթաց ապահովող առանցքային բաղադրիչ: Սոցիալ-տնտեսական և հասարակական պայմաններում ավելի ու ավելի են կարևորվում նոր աշխատաշուկային, տնտեսական զարգացման համաշխարհային պահանջներին ինտեգրումը և այս համատեքստում կարևորվում է կրթական համակարգի կատարելագործումը, կրթության որակի բարձրացման, մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման գործընթացները: Կրթական բարեփոխումները ենթադրում են ուսումնական գործունեության վերակառուցման արմատական փոփոխություններ ողջ մանկավարժական գործընթացում: Այս առումով հատկապես չափազանց մեծ է կրթության ու դաստիարակության, արվեստի, իրավական օրենքների, բարոյական նորմերի, գիտության, հասարակական, պետական հաստատությունների կազմակերպման մշակույթի դերն ու նշանակությունը իրենց արժեքների համակարգով:

Մշակույթի և հասարակական կյանքի մեջ հատուկ տեղ է զբաղեցնում կրթությունը: Ի տարբերություն մշակույթի մյուս տեսակների՝ կրթությունն ուղղակի նպատակ ունի ձևավորել, դաստիարակել մարդ, քաղաքացի՝ որոշակի հասարակական, քաղաքական, մշակութային իդեալի պահանջներին համապատասխան: Մարդու հասարակական, ազգային տեսակի ձևավորումը, որպես արժեքների, վարկանիշների, գաղափարների կրող՝ առաջին հերթին կրթության և դաստիարակության արգասիք է: Այդ հիմքի վրա էլ զարգանում է սերունդների մշակութային գիտակցությունը: Կրթությունը նաև միջոց է, որով սերունդներին է փոխանցում մշակութային պատկանելության (հատկապես ազգային) զգացումն ու գիտակցությունը:

Հայ ժողովրդի ազգայինում բարդ միասնության մարմնավորում են ժողովրդական գեղարվեստական արհեստագործության ազգային ինքնագիտակցության, ժողովրդի կյանքի բարոյահոգեբանական տեսակետների, կենցաղի առանձնահատկությունների, մարդկանց միջև փոխհարաբերությունների առանձին կողմերը: Ահա ինչու ազգային տարազի համատեքստում հագուստի մոդելավորման հանդեպ հետաքրքրության ձևավորման վրա արդյունավետ ազդեցություն ունի տարբեր ոլորտների վերաբերվող գիտելիքների ինտեգրացիա ենթադրող գործունեությունը: Ըստ էության, այս օրինակ մեթոդական համակարգ է «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրատիվ դասընթացը:

Հագուստի մոդելավորման պարապմունքներին սովորողների կարողությունների զարգացումը կարևորող ուսումնասիրությունները մեծ մասամբ դիտարկվում են հագուստի նախագծման, կերպարվեստի, տեխնիկական և համակարգչային գրաֆիկայի, տեխնոլոգիայի դասընթացների հետ նրա տիրույթների ինտեգրացման տեսանկյունից:

Համալիր ուսուցումը դեռևս ոչ լիարժեքորեն է օգտագործում հագուստի մոդելավորման մանկավարժական հնարավորությունները, ուստի հագուստի մոդելավորման բուհական դասընթացի մեթոդները համալիր գործառական դաշտի ձևավորման տեսակետից նորովի

կիրառելու և գործնական աշխատանքում գիտելիքները, կարողությունները և հմտությունները մեկ մասնագիտության մեջ միավորելու փորձ է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

«Հագուստի մոդելավորում» դասընթացի կազմակերպման մեթոդական համակարգի մշակումը, փորձարարական ստուգումը և գիտական հիմնավորումն է ԲՈՒՀ-ում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ուսուցման գործընթացն է:

- **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ**

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ուսուցման մեթոդիկան է:

- **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ**

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացում ուսանողների տեսական գիտելիքների և կատարողական արվեստի տեխնիկայի յուրացումն արդյունավետ կլինի, եթե.

- ուսումնասիրվեն և տեսական վերլուծության ենթարկվեն խնդրին վերաբերվող մանկավարժահոգեբանական, արվեստագիտական տեսություններն ու մոտեցումները:
- բացահայտվեն ազգային տարազի, որպես ժողովրդական գեղարվեստական արհեստների ուսումնառության ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը:
- մշակվեն «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված նոր դասընթացի ծրագիրն ու դասավանդման մեթոդիկան:
- ներդրվեն մանկավարժական հատուկ պայմաններ, որոնք արդյունավետ կդարձնեն «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մշակված մեթոդիկայի կիրառումը:

Հիմք ընդունելով ուսումնասիրության օբյեկտը, առարկան, վարկածը և նպատակը՝ սահմանվել են հետևյալ **ԽՆԴԻՐՆԵՐԸ.**

1. Ուսումնասիրել և վերլուծել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի գիտատեսական հիմքերը՝ որպես ԲՈՒՀ-ում դասավանդվող ուսումնական առարկայի:
2. Բացահայտել ուսանողների գեղարվեստական գործունեության մանկավարժահոգեբանական պայմանները:
3. Վերլուծել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ուսուցման տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները:
4. Սահմանել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում:
5. Փորձարարությամբ հիմնավորել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ծրագրային բովանդակությունը:
6. Մշակել «Հագուստի մոդելավորում» ինտեգրված դասընթացի ուսուցման արդյունավետ մեթոդիկա և փորձարարությամբ հիմնավորել այն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

Հիմք են հանդիսացել անձի գեղարվեստական գործունեության ձևավորման օրինաչափությունների և էության վերաբերյալ հետազոտությունները, հագուստի մոդելավորման, կերպարվեստի տեսության և պրակտիկայի մանկավարժահոգեբանական դրույթները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ԵՆ.

- թեման արծարծող մասնագիտական գրականության տեսական վերլուծություն,
- մանկավարժական գիտափորձի կազմակերպում,
- թեստավորման մեթոդ, դիտում, զրույց,
- անկետավորման և հարցման մեթոդներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ՝

- Մշակվել է «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված դասընթացի հիմնադրույթը:
- Կազմվել է գեղարվեստատեխնոլոգիական ուղղվածության համալիր ծրագիր՝ հագեցված ձևատեսական համապատասխան բովանդակային ցուցումներով:
- Բացահայտվել և մեկնաբանվել են այն մեթոդական հանձնարարականները, որոնք իրենց մեջ ներառում են բակալավրի համապատասխան կուրսում դասավանդվող բոլոր առարկաների միաժամանակյա ուսումնասիրություն:
- Ազգային տարազի համադրությամբ, «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի շրջանակներում, մշակվել է նոր առարկայական ինտեգրված ծրագիր՝ միևնույն կուրսում դասավանդող դասախոսական կազմի թիմային համագործակցային արդյունքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Մշակված է «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի որոշակի մեթոդական համակարգ, ինչը հնարավոր է դարձնում առաջարկված դասընթացի զարգացման տեսական բազայի ստեղծումը որպես ուսումնական մեթոդոլոգիայի մաս:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

1. Առաջարկվող հանձնարարականները, սույն դասընթացի շրջանակներում, կարող են նպաստել սովորողների մասնագիտական գիտելիքների արդյունավետ յուրացմանը, գեղագիտագեղարվեստական կարողությունների ձևավորմանն ու հմտությունների զարգացմանը, նաև կարող են նպաստել սովորողների մոտ տվյալ մասնագիտության հանդեպ գրավչության, մոտիվացիայի առաջացմանը:
2. Ծրագիրը և մեթոդական ցուցումները, որոնք նախատեսվում են ԲՈՒՀ-երի համար, կարող են կիրառվել նաև գեղարվեստական ուղղվածությամբ միջին մասնագիտական հաստատությունների, վարժարանների և արտաուսումնական գեղարվեստական կառույցների ուսուցիչների վերապատրաստման նպատակով:

Առաջադրված գիտահետազոտական նյութերը, մանկավարժական մոտեցումներն ու հանձնարարականները պահանջում են հստակ գործիքակազմ՝ սույն հիմնախնդրով զբաղվող մասնագետների համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

1. «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված դասընթացի ուսուցումը և դրա մեթոդիկայի իրականացումը մանկավարժական հատուկ գործընթաց է գեղարվեստական կրթօջախներում:
2. «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված ուսուցման համար մշակված մեթոդները նպաստում են ուսանողների կողմից հագուստի նախագծման տեխնիկական, ստեղծագործական հմտությունների ձևավորմանը:
3. «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված ուսուցման գործընթացում գեղարվեստական նախագծման միջոցների կիրառումը և մանկավարժական պայմանների ներդրումը ավելի արդյունավետ կլինի եթե.
   - ապահովվեն հագուստի մոդելավորման ուսուցման գործընթացի կազմակերպման ստեղծագործական և ազգային միջավայր,
   - իրականացվի ազգային տարազի վերաբերյալ գիտելիքների հաղորդում, դրանց հիման վրա հագուստի մոդելավորման կատարողական տեխնիկայի զարգացման մեթոդների, տեխնոլոգիաների համադրում,
   - իրականացվի հագուստի մոդելավորման ավանդական-ժողովրդական և ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների միաժամանակյա կիրառում:
4. Մանկավարժական ԲՈՒՀ-ում «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված դասընթացի ուսուցման գործընթացում ազգային տարազից գիտելիքների հաղորդման և կատարողական տեխնիկային նպաստող մեթոդները խթանում են ուսանողների իմացական-ճանաչողական ակտիվությունը, ինքնազարգացումը, նպաստում են նրանց գեղարվեստական մտածողության և գործունեության զարգացմանը, ազգային ավանդույթների վերհանմանը:
5. Մշակված «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրված դասընթացի և մանկավարժական արդյունավետ պայմանների ներդրումը մասնագիտական ԲՈՒՀ-ական կրթություն՝ նպաստում են հագուստի մոդելավորման, նախագծման կարողությունների զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ.

Ուսումնասիրությունն անց է կացվել 2016-2024 թվականներին և կազմված է եղել երեք փոխկապակցված փուլերից:

<u>Առաջին փուլ</u> /2016-2018/ - Կրում էր որոնողական բնույթ: Այս փուլում խնդիր է դրվել իրականացնել մասնագիտական գրականության վերլուծություն, հայտնաբերել ուսումնասիրության հիմնախնդրի լուծման հոգեբանական հիմունքները և մանկավարժական հնարավորությունները, որոշել նպաստավոր պայմանները և մշակել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի միջոցով սովորողների գեղարվեստական գործունեության զարգացման մեթոդական համակարգ:

Երկրորդ փուլ /2018-2020/ - Հավաստող գիտափորձի անցկացում: Այս փուլում սովորողների գեղարվեստաստեղծագործական գիտելիքների կուտակման մշակված մեթոդական համակարգի վերլուծում և ընդհանրացում:

Երրորդ փուլ /2022-2024/ - այս փուլը հետազոտության արդյունքների հավաքագրման, ամփոփման և եզրահանգումներ կատարելու փուլն է, ինչը փաստում է, որ կիրառվող մեթոդական հանձնարարականները, առաջարկվող մանկավարժական պայմանները նախապայմանն են սովորողների գեղարվեստաստեղծագործական կարողությունների ձևավորման և գործունեության իրականացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱ է հանդիսացել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնը, ուր անց են կացվել հիմնական գիտափորձարարական աշխատանքները, գործնականորեն կիրառվել են մանկավարժական գիտափորձի, անկետավորման, թեստավորման և կիրառական նախագծումների արդյունքները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքները զեկուցվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնում՝ ամբիոնի կողմից կազմակերպված սեմինարների, քննարկումների ժամանակ: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հոդվածներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ապահովվում է տեսականորեն հիմնավորված մեթոդաբանական դրույթներով և մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտվող օբյեկտի գեղարվեստա-մանկավարժական առանձնահատկություններին համապատասխան՝ արդյունքների արդյունավետությամբ մեթոդական հանձնարարականների անհրաժեշտության հիմնավորմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, 130 անուն գրականության ցանկից և 2 հավելվածներից: Այն ներառում է 4 աղյուսակ, 1 տրամագիր, 12 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային **122** էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան և խնդիրները, առաջադրված է գիտական վարկածը, ներկայացված են ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության առաջին՝ **««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի տեսական-մեթոդաբանական հիմքերը ԲՈՒՀ-ում»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի, որպես ուսումնական առարկայի, գիտատեսական հիմնավորումը»,** բացահայտվել են հագուստի մոդելավորման՝ որպես ուսումնական առարկայի, ձևավորման և զարգացման պատմաժամանակագրությունը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Անհատի գեղարվեստական կրթության հիմնախնդիրն ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում»** վերլուծվել են ազգային տարազի տեսակները, նրանց զարգացման ընթացքը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով անհատի գեղագիտական աշխարհայացքի ձևավորման համար:

Երրորդ ենթագլխում՝ **«Հայկական տարազի ազգային բնույթը և ուսուցման առանձնահատկությունները»,** բնութագրվել են հայկական տարազի ազգային բնույթը և ժամանակակից սկզբունքները, մեթոդները, ըստ տարածաշրջանի հայկական տարազը բաժանելով երկու հիմնական շրջանների՝ արևմտահայերի և արևելահայերի, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ըստ առանձին տարածաշրջանների:

Ատենախոսության՝ **««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիան ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում»** խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ ««Հագուստի մոդելավորում» դասընթացի հիմնադրույթը, ինտեգրման գործառույթում», սահմանվել են Բարձրագույն ուսումնական հաստատությունների բարեփոխումների իրականացմանը նպաստող նոր բնույթի՝ վերարտադրողից՝ զարգացնող ուսուցման անցմանը: Ուսուցման նման մոդելի առկայությամբ սովորողները կկարողանան կատարել վերլուծություններ և ընդհանրացումներ, համապատասխան համեմատություններ ու մտահանգումներ, կիրառելով տարբեր առարկաներից ստացած գիտելիքներ:

Այստեղ առանջնահերթություն է տրվում հիմնադրույթին, հայացքների համակարգին, նպատակի իմաստային ուղղվածությանը, որի միջոցով հեղինակն արտահայտում է իր աշխարհայացքը, վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, և երբեմն էլ ներկայացնում է արծածվող խնդրի լուծման իր տարբերակը:

Երկրորդ ենթագլուխը՝ **««Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մեթոդիկան և տեխնոլոգիան»** սահմանվում են մանկավարժական այն հիմնական պայմանները, որոնք ի վիճակի են հաջողությամբ լուծել գեղարվեստական կրթության ժամանակակից խնդիրները: Այս նոր մոտեցումները «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրատիվ դասընթացի դասավանդման ընթացքում պետք է համապատասխանեն մասնագիտական գործունեության ժամանակակից պահանջներին:

Երրորդ ենթագլխում՝ «Փորձարարական ուսուցման ընթացքը և արդյունքները» բովանդակում է «Հագուստի մոդելավորում» ինտեգրատիվ դասընթացի փորձարարական ծրագիրը, բնութագրվում է փորձարարության ընթացքը:

Նախորդ ենթագլխում ներկայացված փորձագիտական աշխատանքների հիման վրա հանգեցինք այն համոզման, որ ազգային տարազի ուսումնասիրումը հիմք կարող է հադիսանալ բացահայտելու հագուստի մոդելավորման համալիր դասընթացի

հնարավորությունները սովորողների հայրենագիտական, մասնագիտական և գեղարվեստագեղագիտական ունակությունների զարգացման բնագավառում, նեղ իմաստով ներկայացնել գիտելիքների, պահանջմունքների, հայացքների, արժեքային դրույթների ամբողջություն, որոնք հիմնված են ազգային տարազի նկատմամբ հուզական զգացումների, նրանում գեղարվեստաընկալման, ազգային մտածողության, ստեղծագործական երևակայության, գեղարվեստագեղագիտական կրթության միասնության վրա:

Մանկավարժական գիտափորձի հիմքում ընկած է եղել ուսանողների գործնական հմտությունը այլ գեղարվեստական առարկաների ինտեգրմամբ /գծանկար, գունանկար, համակարգչային դիզայն, գործվածքի դիզայն, հագուստի նախագծում, հագուստի մոդելավորման կոմպոզիցիա և այլն/:

Գիտափորձը անցկացվել է 2018-2024թթ ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Կիրառվել են ուսանողների ուսուցման գործընթացի արդյունքների վերլուծություն, մանկավարժական հետազոտությունների մաթեմատիկական վերամշակում և գիտափորձի արդյունքների մեկնաբանություն, անկետավորում մեթոդները:

Հաստատող փորձի արդյունքում ստուգվել են «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի կարողությունների, ազգային տարազի իմացության նախնական մակարդակը, որի հիմքում ընկած են եղել ուսանողական կուրսային նախագծերը, մասնագիտական նվազագույն գիտելիքները:

Փորձնական հետազոտության մաթեմատիկական հաշվարկը բացահայտել է «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ցածր մակարդակ /այդ թվում ազգային տարազի բնագավառում/, որը ներառում է երեք պարտադիր բաղադրիչներ՝ հանդիսանալով ուսանողների մասնագիտական ունակությունների չափորոշիչներ:

Աղյուսակ 1

Կառուցվածքային բաղադրամասեր		
Մասնագիտական վերա-բերմունքի մակարդակ	Հուզազգազմունքային ներուժի չափանիշներ	Էթնոմշակությային հիմնավորվածություն /ուղղվածություն/
Գիտելիքներ, պատկերա-ցումներ, համոզմունքներ, դատողություններ, չափանիշներ, նախասիրություններ	Հասարակական և գեղագիտական զգացմունքներ ունենալու ընդունակություն	Պահանջմունքներ, հետաքրքրություններ, կենսունակություն
Գեղագիտական կատա - ռելակերպի առկայություն, գեղագիտական ընդհան-րացումների կարողություն	Ազգային արժեքների իրական երևույթների նկատմամբ հուզական վերաբերմունք	Ինքնակատարելագործման ձգտում, գեղարվեստա-ստեղծագործական գործունեության ընդլայնում

Հաստատող գիտափորձի վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մշակման անհրաժեշտությունը, որը կնպաստի ապագա մոդելավորողներին մասնագիտական գործունեության ընթացքում ազգային տարազից ունեցած գիտելիքների արդյունավետ կիրառմանը:

Ուսուցման գործընթացում «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացները մշակվել են համապատասխան ինտեգրման օրենքների՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքների ժամանակ՝ թեմաների մեջ ներառելով ազգային տարրեր ներկայացնող վարժություններ. «Ազգային տարազի հանդեպ հայրենագիտական վերաբերմունքի դրսևորում»,«Հայկական ազգային տարազի նկատմամբ հետաքրքրությունները և նրանում գեղագիտական ընկալումների դրսևորում»:

Առաջադրանքների կատարման ընթացքում ուսանողները դրսևորել են ինքնուրույնություն և մասնագիտական ընդունակությունների բացահայտում ուսումնական գործընթացի համակցված տեսակների նկատմամբ: Ուսանողներին հնարավորություն էր տրվել ինքնուրույն ընտրել աշխատանքի միջոցները, նախագծերը կատարել նպատակահարմար մոտեցմամբ, ստեղծագործել դրանց հորինվածքային կառուցումները, թեմային համապատասխան ընտրել առաջադրանքի մատուցման ձևը՝ օգտագործելով գունագիտությունից և համակարգչային գրաֆիկայից ունեցած գիտելիքները:

- Ցածր մակարդակի գիտափորձի արդյունքում. աշխատանքներում առաջադրանքների կատարման ժամանակ բնութագրական էր օրինակներում թերացումները, որոնք վերաբերվում են ձևերի, գունային որոշումների համակցման անորոշությանը, առանց դրանց իրականացման մեջ արմատական փոփոխությունների ներառման: Այս մակարդակին համապատասխանում էին կարծրատիպային լուծումների ձգտող ուսանողների աշխատանքները:

  Նման աշխատանքներում առկա էր մտածողության որոշակի իներցիա, թույլ էին արտահայտված ավանդույթները, նրանում բարեփոխումները և անհատական դրսևորումները:
- Միջին մակարդակի աշխատանքներում թեմային առնչվող տարրերը համակցված էին դրանց կիրառման, ձևի, գաղափարի ուղղությունների վերափոխման հետ:

  Աշխատանքների կատարման գործընթացում ուսանողների մոտ ձևավորվել է ստեղծագործական երևակայություն, տարաբնույթ մտածելակերպ, հորինվածքի զգացողություն, համաչափության և հարաբերությունների համեմատականություն: Սակայն զգալի սխալներ կային աշխատանքի գրաֆիկական լուծումերում:
- Բարձր մակարդակը բնորոշ էր այն կատարումներին, որտեղ ազատ օգտագործվել են գեղարվեստական-գրաֆիկական նյութը և միջոցները, ինքնուրույն են և յուրօրինակ լուծումներով, որից բխում է ազգային տարազի առանձնահատկությունների կիրառումը իրենց նախագծերում: Պահպանվել են աշխատանքի կատարման հաջորդականության կանոնները: Նախագծումների գրաֆիկական ձևավորումը համապատասխանում էր հորինվածքին ներկայացվող

պահանջներին՝ այդ թվում նաև գունային լուծումները: Աշխատանքում դրսևորված է ստեղծագործական մոտեցում:

Մշակված մեթոդիկայի կիրառմամբ ուսանողների «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացից գիտելիքների յուրացման և ազգային տարազի ուսումնասիրության, ներդրման և կատարողական տեխնիկայի զարգացման մակարդակի գործընթացը ներկայացված է 1, 2, 3, 4 գծապատկերներում: Վերջինները ամփոփում են փորձարարական աշխատանքների արդյունքները:

Գծապատկեր 1.

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

24ուսանող-100%



Գծապատկեր 2.

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՄԲԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

24 ուսանող-100%



Գծապատկեր 3

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՄԲԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

24 ուսանող-100%



Գծապատկեր 4

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

24 ուսանող-100%



Ստացված արդյունքների ամփոփիչ վերլուծությունը ցույց տվեց, որ փորձարարության հավաստող փուլում զգալի դրական շարժընթաց է արձանագրված: Եթե ստեղծագործական խմբում գրանցված բարձր գնահատականի աճը կազմել է 8-21,5%, ապա փորձարարական խմբում այդ աճը կազմել է 29,8-30%: Այսպիսով, մեր անցկացրած գիտափորձի և մշակած մեթոդիկայի կիրառման արդյունքում ակնհայտ է սովորողների հագուստի մոդելավորման՝ կատարողական տեխնիկական և ստեղծագործական կարողությունների զարգացման առաջընթացը, որով հավաստվում է «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի արդյունավետության բարձրացումը և առաջ քաշված գիտական ենթադրության հավաստիությունը:

«ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ» ՀԱՄԱԼԻՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՈՐ՝ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼ

Ինտեգրացված դասընթաց

Առարկաներ՝

Ազգային տարազի պատմություն, Աշխատանք նյութի վրա, Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա, Մասնագիտական գծանկար, գունանկար:

↓

Ինտեգրատիվ գործընթացն իր մեջ ներառում է ուսումնական, գեղարվեստական, ստեղծագործական, մանկավարժական գործունեություն:

↓

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի նպատակը.

- նորաձևության պատմության տարբեր աղբյուրներից տեղեկատվության բացահայտումն է և մասնագիտական ոլորտում դրա վերարտադրումը.
- ազգային տարազի պատմության հետազոտումն է և նորաձևության մեջ վերարտադրումը.
- ուսանողների կողմից ապագա մասնագիտական գործունեության ընթացքում ազգային տարազի իմացության հնարավորությունների կիրառումն է.
- ստեղծագործ անձի դաստիարակությունն է, ով ունակ է նոր ստեղծագործական աշխատանքի՝ նոր շուկայի պայմաններում. ով կարժևորի թե՛ ազգային, թե համաշխարհային մշակութային արժեքներն ու ժառանգությունը.
- ընդլայնել ու հարստացնել սովորողների ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը, մտահորիզոնը, ազգային տարազի իմացության հնարավորությունները:

ՈՒսուցման ինտեգրացիոն համակարգում ներառված են երեք բաղադրիչներ. 1,ինտեգրացիայի առաջին մակարդակը-տեսությունների՝ պրակտիկայի և դասավանդման մեթոդների զուգորդական կապ. 2.ինտեգրատիվ ուսուցման երկրորդ մակարդակ՝ տեսությունը և պրակտիկան հնարավորություն. 3,ինտեգրացիայի երրորդ մակարդակ-համախմբում. գործունեության երկու տեսակ՝ սովորեցնող և ստեղծագործական:	*Ուսանողին ներկայացվող պահանջները* Ինքնուրույնություն, ընդունակությունների բացահայտում, ինքնուրույն աշխատանքի տեխնիկաների ընտրություն, նախագծային թիմային աշխատանք, թեմային համապատասխան առաջադրանքի մատուցման ձևի ընտրություն՝ օգտագործելով գունագիտությունից, կոմպոզիցիայից և համակարգչային գրաֆիկայից ունեցած գիտելիքները, մեդիագրագիտություն, ընկալման ամբողջականություն, համամասնությունների, ռիթմի, գույնի գնահատում, տեսողական հիշողություն, ստեղծագործական ընդունակություններ՝ գեղարվեստական երևակայություն, վերլուծման, գեղագիտական սինթեզի ընդունակություն, զգացմունքայնություն, գաղափարները նյութի մեջ իրականացնելու ընդունակություն, համեմատելու, վերլուծելու և եզրակացություններ կատարելու կարողություններ:

Դասախոսին ներկայացվող պահանջները

Կիրառվում է ուսուցման (հրահանգման) տարատեսակ ռազմավարություններ՝ խրախուսել սովորողների մեջ քննադատական մտածողություն. ձևավորել խնդիր լուծելու և համագործակցելու կարողություն:

21- րդ դարի մանկավարժի կոմպետենցիաներ.

Մեդիագրագիտության, տեխնոլոգիական ստեղծագործականություն, քննադատական մտածողություն, թվային գրագիտություն, կիբերանվտանգության հմտություններ, *կրեատիվություն*, մուլտիմեդիայի կիրառման հմտություններ, մասնակցություն կրթական նախագծերին, առցանց ռեսուրսների և կրթական հարթակների օգտագործում, մանկավարժական կանխատեսում, մանկավարժական ռեֆլեքսիա: Հետադարձ կապ և ինքնավերլուծության կարողություններ, հանրային խոսքի հմտություն, ապրումակցում /էմպատիա/, հաղորդակցման հմտություններ, խմբային աշխատանք և համագործակցային նախագծեր ղեկավարելու կարողություն, համգործակցություն և կոնֆլիկտների լուծման կարողություն, ժամանակի և այլընտրանքային լուծումների կառավարում, նախաձեռնողականություն և հանդուրժողականություն, ստեղծագործականություն և նորարարություն:

Ուսումնառության մանկավարժական պայմանները

Դասախոսության մեթոդ

Հուզական, ապրումակցող խոսք, անմիջական հետադարձ կապ, դասախոսի կողմից դասախոսության նյութն ընտրելու կարողություն, առավելագույն վերահսկման ապահովում, մտքերի գրոհի միջոցով ակտիվացող հարցերի նախնական ընտրություն, ուսանողի ճանաչողական գործունեությունն ուղղորդելու հնարավորություն:

Սոցիոմշակութային փորձի փոխանցման եղանակներն են *բացատրությունը. ցուցադրությունը. համատեղ աշխատանքը. ուսանողի անմիջական պրակտիկան. թրեյնինգները:*

Համագործակցային ուսուցման մեթոդ /կամ տեխնոլոգիա/

Ազատ և անկաշկանդ համագործակցային աշխատանք խմբերում, հետադարձ կապ և ինքնավերլուծություն կարողություններ, ինքնադրսևորման հնարավորություն, սոցիալականացման հնարավորություններ, հաղորդակցական կարողությունների զարգացում, մասնակցություն *կրթական նախագծերին. ստեղծագործականություն և նորարարություն:*

Տեղեկատվական մեթոդ

Ուսանողի աշխատանքային ձևերի գործնական ցուցադրումը (վերհիշական մեթոդ): Մեթոդը կիրառվում է ողջ ուսուցման ընթացքում և համարվում է *գործնական կարողություններ և ունակություններ ձևավորվելու արդյունավետ եղանակ:*

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի սկզբունքները

- Ստեղծագործական ակնհայտության սկզբունք /ուղղված է մեդիագրագիտությանը/. ստեղծագործական ակնհայտությունն իրագործվում է ուսումնական ձեռնարկների և ակնհայտության միջոցների օգնությամբ, մոդելների և մակետների, ուսումնական աղյուսակների, տեխնոլոգիական քարտեզների, դիաֆիլմերի, միջոցով.
- գիտելիքների համակարգվածության և հաջորդականության սկզբունք, հասանելիության և հնարավորությունների իրականացման սկզբունք, ուսումնական գործընթացում ուսանողների գիտակցական ակտիվ մասնակցության սկզբունք:

Հմտություններ և կարողություններ

- Մոդելավորման, նախագծման կարողություն հմտություն.
- հագուստի նախագծման ձևերի հմտություն, կատարման տեխնիկաների և տեխնոլոգիաների կիրառում.
- կազմակերպչական կարողություններն իր ստեղծագործական գործունեության հետ, ստեղծագործական ակտիվության, ներընմբռնման և երևակայության հետևողական զարգացում և ստեղծագործական մտածողություն.
- կոմպոզիցիոն լուծումների հմտություն.
- վերլուծելու, համեմատելու և եզրահանգումներ կատարելու կարողություն:

«Հագուստի մոդեավորում» համալիր դասընթացի իրականացման արդյունավետ մանկավարժական պայմանները.

- ստեղծագործական և ազգային միջավայրի ապահովումը, որը կնպաստի ուսանողների շրջանում համակեցության զգացումի զարգացմանը և խմբի, լսարանի մշակույթի ստեղծմանը,
- մանկավարժական երկխոսության, համագործակցութան և համատեղելիության ապահումը,
- կրթական միջավայրի բովանդակությունը, համամարդկային և ազգային արժեքներ կառուցելը՝ դրանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու պայմանով հիմքի վրա,
- Մշակութաստեղծագործական միջավայրի ձևավորման անհրաժեշտության գիտակցումը. որը նշանակում է՝ առարկայատարածքային այնպիսի միջավայրի կազմակերպում. որը կապահովի ուսանողի ֆիզիկական և հոգեբանական առողջությունը. այսինքն՝ հաշվի կառնվի էրգոնոմիկայի. գունահոգեբանական. գեղագիտական պահանջները:

↓

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի դաստիարակչական բաղադրիչը.

Դասընթացը նպաստում է սովորողների մտավոր, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական, էկոլոգիական, վալիոլոգիական /առողջագիտական/, բարոյական դաստիարակությանը. նպաստում է ուսանողի անհատական փորձի ձևավորումանը՝ աքսեոլոգիական /արժեբանական/, բարոյաէթիկական, հուզական-իմաստային, առարկայական, գնահատողական որակների ամրացմանը. դաստիարակչական միասնական միջավայրի ստեղծմանը՝ հենվելով սովորողի վերաբերմունքի և դիրքորոշման վրա:

↓

«Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացն ավարտող ուսանողից ակնկալվող վերջնարդյունքները.

- *Իմանա հագուստի հորինվածքի օրինաչափությունները:*
- *Ընտրի գրաֆիկական դիզայնի ծրագրեր և այն օգտագործի հագուստի մոդելավորման մեջ:*
- *Համապատասխանեցնի կազմակերպչական կարողություններն իր ստեղծագործական գործունեության հետ :*
- *Ճանաչի համաշխարհային դիզայներ մոդելավորողներին և ձեռք բերի որոշակի փորձ՝ ուսումնասիրելով նրանց ստեղծագործական աշխատանքները:*
- *Իմանա ազգային տարազի պատմությունը և վերարտադրի նորաձևության մեջ:*
- *Կիրառի հագուստի նախագծման և կոնստրուկտավորման ձևերը, կատարման տեխնիկաները և տեխնոլոգիաները:*
- *Բացահայտի նորաձևության պատմության տարբեր աղբյուրներից տեղեկատվություն և վերարտադրի մասնագիտական ոլորտում:*
- *Օգտագործի գործվածքի և հագուստի դիզայնի ելակետային սկզբունքները, կատարման տեխնիկաներն ու տեխնոլոգիաները: Քննարկի նորաձևության հոսքերը և փոխակերպի արդի հագուստում:*
- *Կատարելագործի գեղարվեստական նախագծման սկզբունքների արդյունավետ կիրառումը:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության, գրականության վերլուծության և «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրատիվ դասընթացի ուսուցման մեթոդիկայի փորձարկման արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.**

1. «Հագուստի մոդելավորում» դասընթացի գիտատեսական հիմքերի ուսումնասիրումն ու վերլուծությունն այն դարձնում է ԲՈՒՀ-ում դասավանդվող համալիր ինտեգրատիվ դասընթաց:
2. Հետազոտության մեջ պատմագիտական, արվեստագիտական փաստարկների հիման վրա բացատրված և հիմնավորված են ԲՈՒՀ-ում հագուստի մոդելավորման՝ որպես ուսումնական առարկայի ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը:
3. «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրատիվ դասընթացին վերաբերող նոր եզրույթների սահմանումը կառուցվածքային բաղադրիչների, ուսուցման տեխնոլոգիական առանձնահատկությունների ճշգրտումը հիմք են հանդիսանում հագուստի մոդելավորման ուսուցման մեթոդական կատարելագործման համար:
4. Ատենախոսության վարկածի ստուգման և խնդիրների լուծման համար մշակվել և փորձարարությամբ հիմնավորվել է «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրատիվ դասընթացի դասավանդման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում:
5. Մշակվել և հիմնավորվել է «Հագուստի մոդելավորում» ինտեգրատիվ դասընթացի փորձարարական համալիր ծրագրի բովանդակությունը՝ ուղղված հագուստի մոդելավորման ուսուցման արդյունավետությանը:
6. Մեր կողմից մշակված մանկավարժական պայմանները արդյունավետ են դարձնում «Հագուստի մոդելավորում» համալիր ինտեգրատիվ դասընթացի մշակված մեթոդիկայի կիրառումը, որը նախանշում է ուսուցման տեխնոլոգիական հնարավորությունները և հասանելի արդյունքները:

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

1. Մարոնյան Հ. Կ., «Հագուստի մոդելավորում» համալիր դասընթացի մեթոդիկան և տեխնոլոգիան, «Հայագիտական հանդես» 3-4/66-67/, Երևան 2024, էջ 227- 243:

2. Մարոնյան Հ. Կ., Մարոնյան Պ. Գ., Հագուստի նախագծման և գծագրության միջառարկայական կապի հիմնավորումը, «Դպրատուն» հասարակական գիտությունների հանդես ՍտեՓանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան 2022–

2/14/, էջ 114-119:
3. Մարոնյան Հ. Կ., Ազգային հանդերձանքի առանձնահատկությունների կառուցման և ձևավորման սկզբունքները, «Հայագիտական հանդես» N 3-4 /57-58/, ՀՊՄՀ, ԵՐԵՎԱՆ 2022, էջ 216-223:
4. Մարոնյան Հ. Կ., Հագուստի հայեցակարգային մոդելավորման առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ» գիտական հոդվածներ 2017/2, էջ 252-254:
5. Մարոնյան Հ. Կ., Անհատի գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրները, «Հայագիտական հանդես» 3/20/, Երևան 2012, էջ 131- 135:
6. Մարոնյան Հ. Կ., Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ուսուցման արդիական մեթոդների ընտրումը և հիմնավորումը, «Մանկվարժական միտք»/հավելված «Գեղարվեստական միտք»/, թիվ1, 2012, Զանգակ հրատարակչություն, էջ 155-159:

МАРОНЯН РИПСИМЕ КАРАПЕТОВНА
ОСНОВЫ ПРЕПОДАВАНИЯ МОДЕЛИРОВАНИЯ ОДЕЖДЫ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОГО КОСТЮМА

13. 00. 02 – Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности “Методика преподавания и обучения /Изобразительное искусство/”.

Защита диссертации состоится 27 марта 2025 года в 12:00 на заседании специализированного совета «Педагогика» 020 КВОН (Комитет по высшему образованию и науке) РА по присуждению учених степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна по адресу: 0010 Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Сегодня современная система образования выступает ключевым компонентом, обеспечивающим прогресс в развитии всего общества и государства. В социально-экономических и социальных условиях все более усиливается интеграция с новым рынком труда и глобальными запросами экономического развития. В этом контексте важное значение имеет и совершенствование системы образования, процессы повышения качества образования, подготовки и совершенствования педагогических кадров. Реформы образования предполагают радикальные изменения в перестройке образовательной деятельности во всем педагогическом процессе. В связи с этим чрезвычайно велика роль и значение культуры образования и воспитания, искусства, правовых законов, моральных норм, науки, организации общественных и государственных учреждений с их системой ценностей. По сути, данный пример представляет собой методическую систему комплексного интегративного курса «Моделирование одежды».

Цель исследования

Исследование и анализ курса «Моделирование одежды» в педагогическом университете в контексте национального костюма. «Моделирование одежды» — это разработка комплексного интегрированного нового курса.

Задачи исследования

• Изучить и проанализировать научные основы комплексного курса «Моделирование одежды» как предмета обучения в университете.

• Выявить педагогические и психологические условия художественной деятельности студентов.

• Проанализировать технико-технологические особенности комплексного учебного курса «Моделирование одежды».

• Определить эффективность использования современных методов и технологий преподавания комплексного курса «Моделирование одежды» в контексте изучения национального костюма.

• Обосновать и дополнить экспериментальным содержанием программное содержание комплексного курса «Моделирование одежды».

• Разработать новую программу и модель интегрированного курса «Моделирование одежды».

Научная новизна исследования:

• Разработана схема комплексного курса «Моделирование одежды».

• Подготовлена комплексная программа художественно-технологического обучения, снабженная соответствующими визуальными и содержательными инструкциями.

• Выявлены и интерпретированы методические указания, предполагающие одновременное изучение одной и той же темы на уроках всех преподаваемых предметов в соответствующем курсе бакалавриата.

• В сочетании с национальным костюмом в рамках комплексного курса «Моделирование одежды» в результате командной работы преподавателей этого же курса разработана новая предметная интегрированная программа.

Теоретическое значение исследования

Разработана определенная методическая система комплексного курса «Моделирование одежды», позволяющая создать теоретическую базу для разработки предлагаемого курса в рамках учебной методики.

Практическая значимость исследования:

1. Предлагаемые задания в рамках данного курса могут способствовать эффективному усвоению профессиональных знаний студентов, формированию художественных способностей и развитию художественных навыков, а также могут способствовать привлечению и мотивации. студентов к данной профессии.

2. Програмно-методические указания, запланированные для вузов, могут быть использованы также в целях подготовки преподавателей художественно-

ориентированных средних профессиональных учреждений, школ и внешкольных художественных структур.

Предложенные материалы научного исследования, педагогические подходы и рекомендации подразумевают необходимый инструментарий для специалистов, занимающихся данной проблемой.

Структура и объем исследования: Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка 130 наименований литературы и 2 приложений. Включает 3 таблицы, 1 график, 12 диаграмм. Общий объем диссертации составляет 122 компьютерных страницы.

HRIPSIME K. MARONYAN

FASHION DESIGN TEACHING PREMISES BASED ON THE CONTEXT OF NATIONAL COSTUME

13.00.02 – Dissertation for claiming PhD degree in Pedagogical Sciences, specialisation area "Methodology of Teaching and Upbringing (Fine Arts)".

The dissertation defence will be held on March 27, 2025, at 12:00, at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (Address: 0010 Yerevan,17 Tigran Mets) at the session of the Council Specialised in "Pedagogy" 020 of the HESC (Higher Education and Science Committee).

SUMMARY

The relevance of the research: Nowadays, the modern educational system functions as a key constituent, ensuring progress in the development of society and the state as a whole. Under the current socio-economic and social conditions, the integration with the new labour market is rising, and there is global demand for economic growth. In this regard, the enhancement of the educational system, the improvement of the quality of education, continuous professional development and the upgrading of pedagogical staff are becoming increasingly important. Educational reforms imply radical changes in streamlining educational activities along the whole pedagogical process. Therefore, the role and significance of the culture of education and upbringing, art, legal and moral norms, science, and public and state institution management in line with their system of values are of particular priority. Intrinsicly, this example represents the methodological system of the integrational specialised university course "Fashion Design".

The aim of the research

- to study and analyse the specialised university course "Fashion Design" at the Pedagogical University based on the national costume context;
- to develop a new integrated "Fashion design" course.

The research objectives:

- To study and analyse the theoretical bases of the integrated course in "Fashion design" as a degree-course subject unit at a higher educational institution.
- To identify the pedagogical and psychological conditions for students' artistic activities;
- To analyse the technical and technological peculiarities of teaching the integrated course in "Fashion design";
- To determine modern methodology and technology efficiency in teaching the integrated course in "Fashion design" based on the national costume framework.
- To substantiate and supplement the content of the course through experiments.
- To develop a new course and model for integrated teaching of "Fashion design".

The scientific novelty of the research:

- The respective bases for integrated course in "Fashion" have been developed.
- An integrated course of artistic-technological orientation has been designed, and the necessary instructions and guidelines have been provided.
- The methodological guidelines and parameters – including integrated instruction of the same topic at the sessions of all the subjects of the Bachelor's degree program year – have been identified and deduced.
- Through the teaching team's efforts, an integrated course in "Fashion Design" within national costume design traditions has been developed within this framework.

The theoretical relevance of the research

A specific methodological system for the integrated course "Fashion Design" has been developed, enabling the creation of theoretical bases for the development of the intended course as part of the instructive methodology.

The practical relevance of the research.

1. The proposed assignments, within the framework of this course, can contribute to students' effective assimilation of professional knowledge, the formation of aesthetic and artistic abilities, and the development of aesthetic and artistic skills; they can also contribute to students' attractiveness and motivation towards the given specialisation.
2. The program and methodological guidelines, which are intended for higher education institutions, can also be used to train teachers of artistically oriented secondary vocational institutions, colleges, and extracurricular art education centres.

The proposed scientific research materials, pedagogical approaches, and assignments imply the required tools for specialists dealing with the respective scope of issues.

The structure and volume of the research

The dissertation consists of an introduction, two chapters, conclusions, a list of references and two appendices. It includes 4 tables, 1 chart, and 12 diagrams, as well as 2 Appendixes. The total number of pages 122 pages (without Appendixes), including – 130 entries of literature/reference list.